

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԴՐԱՄԱՇԼՈՐԿԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

ք. Երևան

29 դեկտեմբերի 2025թ.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) Վահան Ռաշիդի Քոչարյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգը» (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված 485 702 200 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

- 2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,
- 2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,
- 2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,
- 2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - 2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - 2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),
 - 2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,
- 2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

- 2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
- 2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
- 2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

- 2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
- 2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

- 2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,
- 2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,
- 2.4.3 Պայմանագրի նախահաշիվը կազմել առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N 2856-Ա/2 հրամանով ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությամբ,
- 2.4.4 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
- 2.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.6 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու ոչ նպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,
- 2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,
- 2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
- 2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան (ամփոփիչ) հաշվետվություն,
- 2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,
- 2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
- 2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է 485 702 200 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

- 4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:
- 4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

- 5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

- 9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
- 9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:
- 9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22
Հ/հ՝ 900011033033
ՀՎՀՀ՝ 02704199

ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝


(ստորագրություն)

Կ. Տ.

Կարեն Բորիսի Ղարիբյան

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

Կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների
ինստիտուտ» ՊՈԱԿ

ք. Երևան, Հր. Ներսիսյան Փ. 25
Հ/հ՝ 900018005505
ՀՎՀՀ՝ 00008791

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Կազմակերպության տնօրեն (նեկտոր)


(ստորագրություն)

Կ. Տ.

Վահան Ռաշիդի Քոչարյան

Քոչարյան Վահան Ռաշիդի


**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Վահան Ռաշիդի Քոչարյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 դեկտեմբերի 2025թ. N 1-3/26-IS/IAPP պայմանագրի գնի վերաբերյալ՝ 485 702 200 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե

Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝


(ստորագրություն) Կ. Տ.
Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

տնօրեն (ռեկտոր)՝


(ստորագրություն) Կ. Տ.
Վահան Ռաշիդի Քոչարյան

ՆԱԽԱՀԱՇԻՎ
 «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

«Հ դրամ»

| Հ/հ | Հոդվածի անվանումը | Ֆինանսավորման չափը | այդ թվում՝ | | | |
|-----------|--|--------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|
| | | | 1-ին եռամսյակ (20%) | 2-րդ եռամսյակ (25%) | 3-րդ եռամսյակ (25%) | 4-րդ եռամսյակ (30%) |
| 1. | աշխատավարձ՝ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) | 444 360 000 | 88 872 000 | 111 090 000 | 111 090 000 | 133 308 000 |
| 2. | տնտեսական ծախսեր՝ | 14 650 000 | 2 930 000 | 3 662 500 | 3 662 500 | 4 395 000 |
| 3. | այլ ծախսեր՝ | 26 692 200 | 5 338 440 | 6 673 050 | 6 673 050 | 8 007 660 |
| Ընդամենը՝ | | 485 702 200 | 97 140 440 | 121 425 550 | 121 425 550 | 145 710 660 |

Կազմակերպության տնօրեն (ոեկտոր)՝

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

(Ստորագրություն)
 (ստորագրություն)

Վահան Ռաշիդի Քոչարյան

Քաջիկ Արուսիկ Սարգսյան



ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

«Ն դրամ»

| Հ/հ | Ծախսերի անվանումը | Ֆինանսավորման ծավալը |
|-----|---|----------------------|
| | Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝ | 14 650 000 |
| 1. | էլեկտրաէներգիայի ծառայություն | 4 500 000 |
| 2. | գազի ծառայություն | 7 330 000 |
| 3. | ջրամատակարարման ծառայություն | 820 000 |
| 4. | կապի ծառայություն | 1 400 000 |
| 5. | աղբահանություն | 600 000 |
| | Այլ ծախսեր, այդ թվում՝ | 26 692 200 |
| 1. | Գույք | 975 000 |
| 2. | Սարքեր և սարքավորումներ | 5 325 000 |
| 3. | Նյութեր | 7 010 000 |
| 4. | Գործուղումներ | 5 400 000 |
| 5. | Գիտական միջոցառումների կազմակերպում | 2 100 000 |
| 6. | Արշավախմբեր | 800 000 |
| 7. | Հրատարակման ծախսեր | 580 000 |
| 8. | ՀԾ սպասարկում և ծառայությունների մատուցում | 950 000 |
| 9. | Այլ ծախսեր | 3 552 200 |

Կազմակերպության տնօրեն (ոեկտոր)՝


(ստորագրություն)

Վահան Ռաշիդի Քոչարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


(ստորագրություն)

Քաջիկ Արուսիկ Սարգսյան



ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

«Ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Կատարել հիմնարար հետազոտություններ կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, ցածրջերմաստիճանային պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, նանո և մեզո համակարգերի ֆիզիկայի, ֆիզիկական բժշկության, այլընտրանքային էներգետիկայի և գիտատար սարքաշինության բնագավառներում, կատարել գիտատեխնիկական մշակումներ և ստեղծել համապատասխան գիտատար սարքերի լաբորատոր նմուշներ, կատարել մշակված ու ստեղծված սարքերի համար հնարավոր ներդրումային դաշտի ուսումնասիրում, ինչպես նաև պահպանել և ընդլայնել ինստիտուտում ձևավորված գիտական դպրոցը և առկա գիտական ներուժը՝ համալրելով երիտասարդ մասնագետներով:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Արդյունքների հավաստիություն, նորույթ, խնդրի զրվածքի արդիականություն, հրատապություն, կիրառության հնարավորություն գիտության ու տեխնիկայի տարբեր ոլորտներում, համաշխարհային գիտության մեջ ինստիտուտին կանոնադրությամբ ամրագրված գիտական ուղղություններով իրականացվող հետազոտությունների ուրույն տեղի ամրապնդում ու ընդլայնում: Հիմնարար և կիրառական բնույթի աշխատանքների հնարավորինս բարձր որակ և միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված բարձր վարկանիշով ունեցող գիտական ամսագրերում տպագրված հոդվածներ:

Կատարել տնտեսության պահանջներից բխող հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական և երկակի նշանակություն ունեցող գիտական արդյունքների ձեռք բերմանն ուղղված հետազոտություններ կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայի, ակուստաֆիզիկայի, մեզո և նանո համակարգերի ֆիզիկայի, նյութագիտության, պլազմայի ֆիզիկայի, ակուստիկայի, ինֆորմացիոն տեխնոլոգիաների և գիտատար սարքաշինության բնագավառներում:

Հետազոտությունների արդյունքները հրապարակել միջազգային գիտատեղեկատվական (Web of Science և Scopus) շտեմարաններում ընդգրկված հեղինակավոր ամսագրերում, վերազինել ինստիտուտը առանձնահատուկ գիտահետազոտական սարքավորումներով:

Պատրաստել բարձրորակ գիտական ու գիտամանկավարժական կադրեր, խրախուսել միջազգային հեղինակավոր գիտական և գիտատեխնիկական կենտրոններում աշխատակիցների վերապատրաստումը, ինչպես նաև կազմակերպել հետազոտական արդյունքների հանրամատչելի ցուցադրում ուսանողների և աշակերտների համար:

Միջազգային հեղինակավոր գիտական և գիտատեխնոլոգիական կենտրոնների հետ իրականացնել մրցունակ գիտական ծրագրեր, ընդլայնել միջազգային համագործակցության ծրագրերը և կազմակերպել միջազգային գիտական միջոցառումներ:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Ընթացիկ ծրագիրը հանդիսանում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված 2021-2025 թթ. ժամանակահատվածում իրականացված գիտական ծրագրի տրամաբանական շարունակությունը: Նախատեսվում է շարունակել, ընդլայնել և իրականացնել հիմնարար և կիրառական գիտահետազոտական աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

- Հետազոտել միաբյուրեղներում արտաքին ազդակների (ակուստիկ ալիքներ, ջերմային գրադիենտ, դեֆորմացիաներ և այլն) առկայության պայմաններում ասիմետրիկ դիֆրակցիայի դեպքում անդրադարձած ռենտգենյան փնջերի տարածաժամանակային բնութագրերի վարքը:
- Իրականացնել դինամիկ դիֆրակցիայի միջճյուղային ցրման երևույթի հետազոտություններ ռենտգենադիֆրակցիոն և ռենտգենախնտերֆերենցիոն արտապատկերման խնդիրներում:
- Ուսումնասիրել կամայական կոր մուտքի և ելքի մակերևույթներով կատարյալ և դեֆորմացված միաբյուրեղներում ջերմային նեյտրոնների դինամիկ ցրման առանձնահատկությունները:
- Ռենտգենյան բազմաբլոկ ինտերֆերաչափերի միջոցով հետազոտել բյուրեղներում կառուցվածքային արատները և լարվածադեֆորմացիաները:
- Ուսումնասիրել սիլիցիումի կատարյալ միաբյուրեղում երկձեղք համակարգից ձևավորված նեղ մոնոքրամատիկ ռենտգենյան փնջերի դինամիկ դիֆրակցիայի տիրույթների վերադրման արդյունքում ստացված Յունգի գծերի առանձնահատկությունները:
- Մշակել ռենտգենյան տոմոգրաֆիկ և սպեկտրաչափական արդյունավետ մեթոդներ և իրականացնել հնագիտական, արդյունաբերական և այլ նմուշների ռենտգեն-միկրոտոմոգրաֆիական և քիմիական բաղադրության տեղագրական հետազոտություններ:
- ԳՀԳ-SՀԳ ճառագայթման ինտերֆերոմետրերի կիրառմամբ իրականացնել թեստային նմուշների ֆազակոնտրաստային պատկերագրում:
- Իրականացնել Si-ի միաբյուրեղ-օդ պարբերական կառուցվածքով համակարգից ռեյատիվիստիկ լիցքավորված մասնիկների պարամետրական և անցումային ռենտգենյան ճառագայթման բնութագրերի փորձարարական հետազոտություններ «Գերմանական էլեկտրոնային սինքրոտրոն» հետազոտական կենտրոնի էլեկտրոնային և պոզիտրոնային փնջերի միջոցով (DESY 2 Test Beam-ի վրա ATORCH ծրագրի շրջանակներում):

- Տիտանի, բարիումի, ցեզիումի և ցերումի տարրեր խառնուրդային միացությունների հիման վրա սինթեզված նոր միջավայրերի հետ իննացնող ճառագայթների ու տարրական մասնիկների փոխազդեցության արդյունքում ի հայտ եկող երևույթների ուսումնասիրում:
- Հաղորդիչ կամ դիսպերսիվ դիէլեկտրիկ նյութից պատրաստված գունդը հատող լիցքավորված մասնիկների թանձրուկների շղթայի մակաձած էլեկտրամագնիսական դաշտի առանձնահատկությունների ուսումնասիրում, օգտագործելով տեսական և մոդելավորման տարրեր մեթոդներ:
- Դիէլեկտրիկ գլանային ալիքատարի առկայությամբ, տարբեր հետազոտելով շարժվող լիցքավորված մասնիկների փնջերի մակաձած էլեկտրամագնիսական դաշտի առանձնահատկությունների՝ մասնավորապես տարբեր տիպի ճառագայթման տեսակների մակաձման հնարավորության ուսումնասիրում:
- Ուսումնասիրվելու են Ֆուլինգ-Ռինդլերի վակուումի տեղային բնութագրերը (D+1)-չափանի, հարթ տարածաժամանակում՝ հաստատուն արագացմամբ շարժվող՝ հարթ սահմանով ինդուկցված գանգվածային Դիրակի դաշտի համար:
- Տարբեր գիտական կենտրոնների (CANDLE, DESY և այլն) արագացուցիչների էլեկտրոնային փնջերի և տարբեր կառուցվածքներով դիէլեկտրիկ և հաղորդիչ թիրախների փոխազդեցության արդյունքում մակաձված էլեկտրամագնիսական ճառագայթման բնութագրերի փորձարարական հետազոտում:
- Տիեզերքի անհամասեռությունների պարզաբանման նպատակով 0827+24 և 1555-00 քվազարների շրջակայք ուսումնասիրում, բազմահաճախային տիրույթներում առկա դիտողական տվյալների հիման վրա:
- Նախատեսվում է ուսումնասիրել Գրինի ֆունկցիան ֆերմիոնների համար արտաքին ոչ Աբելյան, SU(N) սիմետրիայի խմբով տրամաչափային դաշտում: Որպես արտաքին դաշտ, դիտարկվելու է Յանգ-Միլսի հավասարման լուծումը, որը ներկայացված է լույսի կոնի վրա հարթ ալիքի տեսքով:
- Տեսականորեն հետազոտել երկէլեկտրոնային խառնուկային վիճակները CdSe նանոթիթեղներում, բնեռային երևույթների հաշվառմամբ:
- Կալոջերոյի մոդելի շրջանակներում ուսումնասիրել գույգ-գույգ փոխազդող միաչափ էլեկտրոնային գազի վիճակագրական հատկությունները:
- Հետազոտել CdSe նանոթիթեղում տեղայնացված թույլ փոխազդող էլեկտրոնային գազի դիամագնիսական հատկությունները, պայմանավորված նանոթիթեղի հաստությամբ և դիէլեկտրական սահմանափակման երևույթի հաշվառմամբ:
- Ուսումնասիրել լիցք-դիոն համակարգի առկայությամբ էլեկտրոնային գազի ջերմադինամիկական և մագնիսական հատկությունները գնդային նանոշերտում, այն դեպքում, երբ լիցք-դիոնը տեղայնացված է նանոշերտի կենտրոնում:

- Իրականացնել 18 ՄԷՎ պրոտոնային փնջով անագի ^{112}Sn , ^{120}Sn , և ^{124}Sn թիրախների ճառագայթման արդյունքում ստացված միջուկային ռեակցիաների ուսումնասիրություններ:
- Առաջադրել տեսական մեխանիզմ CCTO ընտանիքին պատկանող սինթեզված միացություններում դիլեկտրիկ թափանցելիության համար արձանագրված բացասական արժեքների բացատրության համար, մասնավորապես խնդիրը ձևակերպել և լուծել քվանտամեխանիկական մոտեցմամբ:
- Հետազոտել բյուրեղներում ակուստիկ ալիքների կամ ջերմային գրադիենտի առկայության պայմաններում ասիմետրիկ անդրադարձման դեպքում ռենտգենյան ճառագայթման անոմալ կլանման երևույթի առանձնահատկությունները:
- Ակուստապլազմային պարպման կաթոդամերձ տիրույթում՝ պարպման պարամետրերի վրա տարբեր տեսակի կաթոդների ազդեցության ուսումնասիրություններ:
- Ակուստապլազմային տատանումների միջոցով արգելված քվանտային դիպոլային անցումների «հաղթահարման» հիման վրա լույսի նոր մոնոքրոմատիկ աղբյուրների ստեղծման հնարավորության ուսումնասիրություն:
- Մոլեկուլի պտույտի շնորհիվ արգելված քվանտային դիպոլային անցումների «հաղթահարման» մեխանիզմի տեսական ուսումնասիրություն:
- Որոշակի ռեզոնանսային հատկություններով օժտված անհամասեռություններ պարունակող բազմաշերտ միջավայրերում ակուստիկական ալիքների տարածման ընթացքում ի հայտ եկող երևույթների ուսումնասիրություն ու նոր երևույթների բացահայտում:
- Սեյամիկ - ակուստիկական և այլ ցածր հաճախականային ազդանշանների անընդհատ տեսանելի գրանցման փոման էլեկտրոնային մեթոդների ու դրանց իրականացման սարքերի հանգույցների ուսումնասիրում:
- ՀՀ տարածքային հակասեյամիկ նախնական ահազանգման և պաշտպանության ցանցային միասնական համակարգի մշակման և ստեղծման համար առանցքային նշանակություն ունեցող ահազանգման որոշումների կայացման պայմանների, սկզբունքների և ալգորիթմների ստեղծման ուսումնասիրում:
- Սարկոզին – Bi_2O_3 – HI, Սարկոզին – Bi_2O_3 – HBr, Սարկոզին – $\text{Bi}(\text{NO}_3)_3 \cdot 5\text{H}_2\text{O}$ – HI, Սարկոզին – $\text{Bi}(\text{NO}_3)_3 \cdot 5\text{H}_2\text{O}$ – HBr համակարգերի հետազոտում սարկոզինի յոդա- և բրոմաբիսմութատներ սինթեզելու համար: Բնութագրում ինֆրակարմիր և ռաման սպեկտրոսկոպիայի միջոցով, բյուրեղացում, բյուրեղային կառուցվածքի որոշում, ջերմային կայունության և փուլային անցումների ուսումնասիրում թերմիկ անալիզի միջոցով, դիլեկտրական չափումներ պիրոլեկտրական հատկությունների ուսումնասիրման նպատակով:
- L-օրնիթինի պոլիյոդիդների ստացում L-Օրն – HI – I₂ ջրային համակարգից, բնութագրում ինֆրակարմիր և ռաման սպեկտրոսկոպիայի միջոցով, բյուրեղացում, բյուրեղային կառուցվածքի որոշում, օպտիկական հատկությունների ուսումնասիրում դիֆուզ անդրադարձման ՈւՄ-տեսանելի սպեկտրոսկոպիայի միջոցով, արգելված գոտու գնահատում:

- Էտիդրոնաթթվի նոր աղերի սինթեզ՝ հիմնականում զանազան ամինոթթուներով, միաբյուրեղների ստացում, բնութագրում ինֆրակարմիր և ռաման սպեկտրոսկոպիայի միջոցով, բյուրեղային և մոլեկուլային կառուցվածքի որոշում, կապերի ուսումնասիրում:
- Լիթիումի յոդատի շերտավոր միաբյուրեղների աճեցում և նրանց դիէլեկտրիկ և ոչ գծային օպտիկական հատկությունների, կարծրության, ջերմակայունության, արգելման գոտու լայնության ուսումնասիրում:
- Ինստիտուտում մշակված ձայնային ալիքների ազդեցությամբ բյուրեղների սինթեզման մեթոդի միջոցով նոր բյուրեղների հայտնաբերում և DFT հաշվարկների իրականացում:
- Տարբեր տեխնոլոգիաների կիրառմամբ սինթեզել $\text{CaCu}_3\text{Ti}_4\text{O}_{12}$ (CCTO) ընտանիքին պատկանող միացություններ՝ նվազեցնելով դիէլեկտրիկ կորուստները (հասցնելով մինչև 0,02), իջեցնել սինթեզի և ջերմամշակման ջերմաստիճանները (մինչև 6500C -7000C), գերսառեցման եղանակով ստանալ ապակի և այն բյուրեղացնել տարբեր արտաքին ազդեցությունների առկայությամբ, ինչպես նաև հետազոտել ստացված նյութերի էլեկտրական և դիէլեկտրական հատկությունները:
- Շեղուկների մազական տրոհման պրոցեսում ձևավորվող միկրոկաթիլների դինամիկայի տեսական և փորձարարական հետազոտություններ:
- Միկրոնային և սուբմիկրոնային մասնիկների վրա լույսի ցրման առանձահատկությունների փորձարարական հետազոտությունների իրականացում՝ կախված մասնիկների ձևից և բեկման ցուցիչից:
- Ռենտգենյան փնջերի սիմետրիկ և ասիմետրիկ դիֆրակցիայի հիման վրա մշակել և ստեղծել կառավարելի բնութագրերով (լուծաչափ և լուսաուժ) արդյունավետ ռենտգենյան սպեկտրաչափական մեթոդ:
- Ուսումնասիրել և մշակել թույլ կլանող նյութերի ռենտգենախնտերֆերաչափական մեթոդ:
- 3D տպագրությամբ տարբեր խառնուրդներով պատրաստված թեստային պլաստիկ և այլ նմուշների կլանման և դիէլեկտրիկ թափանցելիության անհամասեռությունների հետազոտման հիման վրա ԳՀց-ՏՀց պատկերագրման նոր մեթոդների մշակում,
- Սինթեզված կերամիկական նոր բազմաբաղադրիչ նյութերի հիման վրա լայն հաճախային տիրույթի սեյսմա-ակուստիկական գրանցիչ-փոխակերպիչ համակարգի մշակում ու ստեղծում:
- Կառավարելի բնութագրերով այլընտրանքային ակուստիկական ալիքների աղբյուրների ստեղծում և նրանց բնութագրերի ուսումնասիրում:
- Տիտանատ բարիումի հարթ թաղանթային շերտերի ցածր ջերմաստիճային սինթեզի նոր մեթոդի մշակում:
- Պերօքսիդների սինթեզի այլընտրանքային համակարգի մշակում ու ստեղծում:

Նախատեսված գիտահետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում կօգտագործվեն կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայի, ակուստաֆիզիկայի, պլազմայի

Ֆիզիկայի, ակուստիկայի, նյութագիտության, նանո և մեզո համակարգերի ֆիզիկայի բնագավառներում աշխարհում լայն կիրառում ստացած արդիական, միջազգային մակարդակով մրցունակ տեսական և փորձարարական հիմնարար հետազոտական մեթոդներ՝ ելնելով տրված խնդրի առանձնահատկությունից: Նախատեսված որոշ նպատակների և խնդիրների իրականացման համար կմշակվեն, կզարգացվեն և կկիրառվեն մոտավոր վերլուծական մեթոդներ և բարդ համակարգերի թվային մոդելավորման եղանակներ, ինչպես նաև նոր մեթոդներ, որոնք հետազոտությունների ընթացքում կստանան իրենց հիմնավորումները: Գիտահետազոտական աշխատանքների ընթացքում ստացված բոլոր նյութերը կհամակարգվեն և կներկայացվեն եզրափակիչ հաշվետվությունում:

Կազմակերպության
տնօրեն (ոեկտոր)՝


(ստորագրություն)

(Վահան Քոչարյան)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝




(ստորագրություն)

(Վահան Քոչարյան)
(անուն ազգանուն)

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ*

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

Իրականացվելիք միջոցառման

| h/h | անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | կատարման ժամկետները |
|-----|--|--|--|-----------------------|
| 1 | Հիմնարար հետազոտություններ | <p>- Միաբյուրեղներում արտաքին ազդակների (ակուստիկ ալիքներ, ջերմային գրադիենտ, դեֆորմացիաներ և այլն) առկայության պայմաններում ասիմետրիկ դիֆրակցիայի դեպքում անդրադարձած ռենտգենյան փնջերի տարածաժամանակային բնութագրերի վարքի հետազոտում:</p> <p>- Ռենտգենադիֆրակցիոն և ռենտգենահետադիֆրակցիոն արտապատկերման խնդիրներում դինամիկ դիֆրակցիայի միջճյուղային ցրման երևույթի հետազոտում:</p> <p>- Հաղորդիչ կամ դիսպերսիվ դիէլեկտրիկ նյութից պատրաստված գունդը հատող լիցքավորված մասնիկների թանձրուկների շղթայի մակաձած էլեկտրամագնիսական դաշտի առանձնահատկությունների ուսումնասիրում, օգտագործելով տեսական և մոդելավորման տարբեր մեթոդներ:</p> <p>- Դիէլեկտրիկ գլանային ալիքատարի առկայությամբ, տարբեր հետազոտվող շարժվող լիցքավորված մասնիկների փնջերի մակաձած էլեկտրամագնիսական դաշտի առանձնահատկությունների մասնավորապես տարբեր տիպի ճառագայթման տեսակների մակաձման հնարավորության ուսումնասիրում:</p> <p>CdSe նանոթիթեղներում երկէլեկտրոնային խառնուկային վիճակների ուսումնասիրում բնեռային երևույթների</p> | Տեսական հետազոտություններ, թվային հաշվարկներ, փորձերի նախապատրաստում, փորձեր | 01.01.2026-31.03.2026 |
| 1.1 | Փորձարարական ու տեսական հետազոտություններ, կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, կիսահաղորդիչների ֆիզիկայի և նանո և մեզո համակարգերի ֆիզիկայի բնագավառներում | | | |

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել հոտանդակային փուլերով:

Փորձարարական ու տեսական հետազոտություններ ակուստաֆիզիկայի և պլազմայի ֆիզիկայի բնագավառներում

Փորձարարական ու տեսական հետազոտություններ նյութագիտության և բժշկական ֆիզիկայի բնագավառներում

Փորձարարական ու տեսական հետազոտություններ, կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, կիսահաղորդիչների ֆիզիկայի և նանո և մեզո համակարգերի ֆիզիկայի բնագավառներում

հաշվառմամբ:

- Ակուստապլազմային պարպման կաթոդամերձ տիրույթում՝

պարպման պարամետրերի վրա տարբեր տեսակի կաթոդների ազդեցության ուսումնասիրում:
- Ակուստապլազմային տատանումների միջոցով արգելված քվանտային դիպոլային անցումների «հաղթահարման» հիման վրա լույսի նոր մոնոքրոմատիկ աղբյուրների ստեղծման հնարավորության ուսումնասիրում:

- Տարբեր տեխնոլոգիաների կիրառմամբ $CaCu_3Ti_4O_{12}$ (CCTO) ընտանիքին պատկանող միացությունների սինթեզում՝ նվազեցնելով դիէլեկտրիկ կորուստները (հասցնելով մինչև 0,02), իջեցնել սինթեզի և ջերմամշակման ջերմաստիճանները (մինչև 6500C -7000C), գերսառեցման եղանակով տառնալ ապակի և այն բյուրեղացնել տարբեր արտաքին ազդեցությունների առկայությամբ, ինչպես նաև հետազոտել ստացված նյութերի էլեկտրական և դիէլեկտրական հատկությունները:

- Լիթիումի յոդատի շերտավոր միաբյուրեղների աճեցում և նրանց դիէլեկտրիկ և ոչ գծային օպտիկական հատկությունների, կարծրության, ջերմակայունության, արգելման գոտու լայնության ուսումնասիրում:

-Ռենտգենյան բազմաբլոկ ինտերֆերաչափերի միջոցով բյուրեղներում կառուցվածքային արատների և լարվածադեֆորմացիաների ուսումնասիրում:

- Սիլիցիումի կատարյալ միաբյուրեղում երկճեղք համակարգից ձևավորված նեղ մոնոքրամատիկ ռենտգենյան փնջերի դինամիկ դիֆրակցիայի տիրույթների վերադրման արդյունքում ստացված Յունգի գծերի առանձնահատկությունների ուսումնասիրում:

- Ֆուլինգ-Ռինդլերի վակուումի տեղային բնութագրերի հետազոտում (D+1) չափանի, հարթ տարածաժամանակում հաստատուն արագացմամբ

Տեսական հետազոտություններ, թվային հաշվարկներ, փորձերի նախապատրաստում, փորձեր

Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական հետազոտություններ, թվային հաշվարկներ

01.04.2026-
30.06.2026

1.2

Փորձարարական ու տեսական հետազոտություններ ակուստաֆիզիկայի և պլազմայի ֆիզիկայի բնագավառներում

Փորձարարական ու տեսական հետազոտություններ նյութագիտության և բժշկական ֆիզիկայի բնագավառներում

շարժվող հարթ սահմանով ինդուկցված զանգվածային Դիրակի դաշտի համար:

- Տիեզերքի անհամասեռությունների պարզաբանման նպատակով 0827+24 և 1555-00 քվազարների շրջակայքի ուսումնասիրում բազմահաճախային տիրույթներում առկա դիտողական տվյալների հիման վրա:

- Կալոջերոյի մոդելի շրջանակներում գույգ-գույգ փոխազդող միաչափ էլեկտրոնային գազի վիճակագրական հատկությունների ուսումնասիրում:

- ԳՀԳ-ՏՀԳ ճառագայթման ինտերֆերոմետրերի կիրառմամբ իրականացնել թեստային նմուշների ֆազակոնտրաստային պատկերագրում:

- Մոլեկուլի պտույտի շնորհիվ արգելված քվանտային դիպոլային անցումների «հաղթահարման» մեխանիզմի տեսական ուսումնասիրություն:

- Որոշակի ռեզոնանսային հատկություններով օժտված անհամասեռություններ պարունակող բազմաշերտ միջավայրերում ակուստիկական ալիքների տարածման ընթացքում ի հայտ եկող երևույթների ուսումնասիրում և նոր երևույթների բացահայտում:

- Սարկոզին – Bi2O3 – HI, Սարկոզին – Bi2O3 – HBr, Սարկոզին – Bi(NO3)3·5H2O – HI, Սարկոզին – Bi(NO3)3·5H2O – HBr համակարգերի հետազոտում սարկոզինի յոդա- և բրոմաբիսմութատներ սինթեզելու համար: Բնութագրում ինֆրակարմիր և ռաման սպեկտրոսկոպիայի միջոցով, բյուրեղացում, բյուրեղային կառուցվածքի որոշում, ջերմային կայունության և փուլային անցումների ուսումնասիրում թերմիկ անալիզի միջոցով, դիէլեկտրական չափումներ պիրոէլեկտրական հատկությունների ուսումնասիրման նպատակով:

- CCTO ընտանիքին պատկանող սինթեզված միացություններում դիէլեկտրիկ թափանցելիության համար արձանագրված բացասական արժեքների բացատրության համար, տեսական

մեխանիզմի առաջադրում
մասնավորապես
քվանտամեխանիկական
մոտեցմամբ:

- Կամայական կոր մուտքի և էլքի
մակերևույթներով կատարյալ և
դեֆորմացված միաբյուրեղներում
ջերմային նեյտրոնների դինամիկ
ցրման առանձնահատկությունների
ուսումնասիրում:

- Գնդային նանոշերտում լիցք-դիոն
համակարգի առկայությամբ
էլեկտրոնային գազի
ջերմադինամիկական և
մագնիսական հատկությունների
ուսումնասիրում, այն դեպքում, երբ
լիցք-դիոնը տեղայնացված է
նանոշերտի կենտրոնում:

- Ֆերմիոնների Գրինի ֆունկցիայի
հետազոտում, արտաքին ոչ Աբելյան,
SU(N) սիմետրիայի խմբով
տրամաչափային դաշտում: Որպես
արտաքին դաշտ, դիտարկվելու է
Յանգ-Միլսի հավասարման
լուծումը, որը ներկայացված է լույսի
կոնի վրա հարթ ալիքի տեսքով:

- 18 ՄԷՎ պրոտոնային փնջով
անագի ^{112}Sn , ^{120}Sn , և ^{124}Sn

թիրախների ճառագայթման
արդյունքում ստացված միջուկային
ռեակցիաների ուսումնասիրում:

- Բյուրեղներում ակուստիկ
ալիքների կամ ջերմային
գրադիենտի առկայության
պայմաններում ասիմետրիկ
անդրադարձման դեպքում
ռենտգենյան ճառագայթման անոմալ
կլանման երևույթի
առանձնահատկությունների
ուսումնասիրում:

- Միկրոնային և սուբմիկրոնային
մասնիկների վրա լույսի ցրման
առանձնահատկությունների
փորձարարական
հետազոտությունների
իրականացում կախված
մասնիկների ձևից և բեկման
ցուցիչից:

- Տարբեր գիտական կենտրոնների
(CANDLE, DESY և այլն)
արագացուցիչների էլեկտրոնային
փնջերի և տարբեր
կառուցվածքներով դիէլեկտրիկ և
հաղորդիչ թիրախների
փոխազդեցության արդյունքում
մակաձված էլեկտրամագնիսական
ճառագայթման բնութագրերի
փորձարարական հետազոտում:

Փորձարարական ու
տեսական
հետազոտություններ,
կոնդենսացված
վիճակի ֆիզիկայի,
1.3 կիսահաղորդիչների
ֆիզիկայի և նանո և
մեզո համակարգերի
ֆիզիկայի
բնագավառներում

Փորձերի
նախապատրաստում,
փորձեր, տեսական
հետազոտություններ,
թվային հաշվարկներ

01.07.2026-
30.09.2026

Փորձարարական ու տեսական հետազոտություններ ակուստաֆիզիկայի և պլազմայի ֆիզիկայի բնագավառներում

Փորձարարական ու տեսական հետազոտություններ նյութագիտության և բժշկական ֆիզիկայի բնագավառներում

Փորձարարական ու տեսական հետազոտություններ, կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, կիսահաղորդիչների ֆիզիկայի և նանո և մեզո համակարգերի ֆիզիկայի
1.4 բնագավառներում

- Սեյսմիկ - ակուստիկական և այլ ցածր հաճախականային ազդանշանների անընդհատ տեսանելի գրանցման փոման էլեկտրոնային մեթոդների ու դրանց իրականացման սարքերի հանգույցների ուսումնասիրում:

- Էտիդրոնաթթվի նոր աղերի սինթեզ՝ հիմնականում զանազան ամինոթթուներով, միաբյուրեղների ստացում, բնութագրում ինֆրակարմիր և ռաման սպեկտրոսկոպիայի միջոցով, բյուրեղային և մոլեկուլային կառուցվածքի որոշում, կապերի ուսումնասիրում:

- Ինստիտուտում մշակված ձայնային ալիքների ազդեցությամբ բյուրեղների սինթեզման մեթոդի միջոցով նոր բյուրեղների հայտնաբերում և DFT հաշվարկների իրականացում:

- Si-ի միաբյուրեղ-ոդ պարբերական կառուցվածքով համակարգից ռեյատիվիստիկ լիցքավորված մասնիկների պարամետրական և անցումային ռենտգենյան ճառագայթման բնութագրերի փորձարարական հետազոտում «Գերմանական էլեկտրոնային սինքրոտրոն» հետազոտական կենտրոնի էլեկտրոնային և պոզիտրոնային ֆնջերի միջոցով (DESY 2 Test Beam-ի վրա ATORCH ծրագրի շրջանակներում):

- Տիտանի, բարիումի, ցեզիումի և ցերումի տարբեր խառնուրդային միացությունների հիման վրա սինթեզված նոր միջավայրերի հետ իոնացնող ճառագայթների ու տարրական մասնիկների փոխազդեցության արդյունքում ի հայտ եկող երևույթների ուսումնասիրում:

- CdSe նանոթիթեղում տեղայնացված թույլ փոխազդող էլեկտրոնային գազի դիամագնիսական հատկությունների ուսումնասիրում պայմանավորված նանոթիթեղի հաստությամբ և դիէլեկտրական սահմանափակման երևույթի հաշվառմամբ:

- Շեղուկների մագական տրոհման

Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական հետազոտություններ, թվային հաշվարկներ

01.10.2026-
31.12.2026

| | | | |
|--|--|---|---------------------------|
| Փորձարարական ու տեսական հետազոտություններ ակուստաֆիզիկայի և պլազմայի ֆիզիկայի բնագավառներում | <p>պրոցեսում ձևավորվող միկրոկաթիլների դինամիկայի տեսական և փորձարարական հետազոտում:</p> <p>- ՀՀ տարածքային հակասեյսմիկ նախնական ահազանգման և պաշտպանության ցանցային միասնական համակարգի մշակման և ստեղծման համար առանցքային նշանակություն ունեցող ահազանգման որոշումների կայացման պայմանների, սկզբունքների և ալգորիթմների ստեղծման ուսումնասիրում:</p> | | |
| Փորձարարական ու տեսական հետազոտություններ նյութագիտության և բժշկական ֆիզիկայի բնագավառներում | <p>- L-օրնիթինի պոլիյոդիդների ստացում L-Orn – H1 – I2 ջրային համակարգից, բնութագրում ինֆրակարմիր և ռաման սպեկտրոսկոպիայի միջոցով, բյուրեղացում, բյուրեղային կառուցվածքի որոշում, օպտիկական հատկությունների ուսումնասիրում դիֆուզ անդրադարձման ՈւՄ-տեսանելի սպեկտրոսկոպիայի միջոցով, արգելված գոտու գնահատում:</p> | | |
| 2. Կիրառական Հետազոտություններ | | | |
| 2.1 Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում | <p>- Ռենտգենյան փնջերի սիմետրիկ և ասիմետրիկ դիֆրակցիայի հիման վրա կառավարելի բնութագրերով (լուծաչափ և լուսաուժ) արդյունավետ ռենտգենյան սպեկտրաչափական մեթոդի մշակում և ստեղծում:</p> <p>- Թույլ կլանող նյութերի ռենտգենահետքաֆերաչափական մեթոդի հետազոտում և մշակում:</p> | Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում | 01.01.2026- 31.03.2026 |
| 2.2 Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում | <p>- 3D տպագրությամբ տարբեր խառնուրդներով պատրաստված թեստային պլաստիկ և այլ նմուշների կլանման և դիֆեկտրիկ թափանցելիության անհամասեռությունների հետազոտման հիման վրա ԳՀց-SՀց պատկերագրման նոր մեթոդների մշակում:</p> | Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում | 01.04.2026- 30.06.2026 |
| 2.3 Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում | <p>- Սինթեզված կերամիկական նոր բազմաբաղադրիչ նյութերի հիման վրա լայն հաճախային տիրույթի սեյսմա-ակուստիկական գրանցիչ-փոխակերպիչ համակարգի մշակում ու ստեղծում:</p> <p>- Կառավարելի բնութագրերով այլընտրանքային ակուստիկական ալիքների աղբյուրների ստեղծում և</p> | Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում | 01.07.2026- 30.09.2026 |

| | | | | |
|-----|--|---|---|-----------------------|
| 2.4 | Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում | <p>նրանց բնութագրերի ուսումնասիրում:</p> <p>- Տիտանատ բարիումի հարթ թաղանթային շերտերի ցածր ջերմաստիճային սինթեզի նոր մեթոդի մշակում:</p> <p>- Ռենտգենյան տոմոգրաֆիկ և սպեկտրաչափական արդյունավետ մեթոդների մշակում և հնագիտական, արդյունաբերական և այլ նմուշների ռենտգեն-միկրոտոմոգրաֆիական և քիմիական բաղադրության տեղագրական հետազոտությունների իրականացում:</p> <p>- Պերօքսիդների սինթեզի այլընտրանքային համակարգի մշակում ու ստեղծում:</p> | Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում | 01.10.2026-31.12.2026 |
| 3. | Գիտական միջոցառումների կազմակերպում | | Նախատեսվող դպրոցների և գիտաժողովների կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ, նյութերի պատրաստում, կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ | 01.01.2026-31.03.2026 |
| 3.1 | Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների կազմակերպում | Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյունքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները: | ASRP-2026, OPTCS - 2026, BRIA - 2026, դպրոց-գիտաժողովների թեզիսների ժողովածուների հրատարակում, կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ | 01.04.2026-30.06.2026 |
| 3.2 | Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների կազմակերպում (OPTCS -2026, ASRP-2026, BRIA-2026) | Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյունքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները: | ASRP-2026, OPTCS - 2026, BRIA-2026, դպրոց-գիտաժողովների նյութերի հրատարակման նպատակով, գրախոսական և հրատարակչական աշխատանքներ, հաշվետվությունների | 01.07.2026-30.09.2026 |
| 3.3 | Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների | Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյունքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները: | ASRP-2026, OPTCS - 2026, BRIA-2026, դպրոց-գիտաժողովների նյութերի հրատարակման նպատակով, գրախոսական և հրատարակչական աշխատանքներ, հաշվետվությունների | 01.07.2026-30.09.2026 |

կազմակերպում

Միջազգային,
հանրապետական ու
տեղային
նշանակության
գիտաժողովների,
սեմինարների,
3.4 գիտական
հանդիպումների և
համատեղ
գիտահետազոտական
հետազոտությունների
կազմակերպում

Իրականացնել կազմակերպչական
աշխատանքներ ստացված
գիտատեխնիկական արդյունքների
քննարկման, ներկայացման և
գիտական հանրությանը
ծանոթացնելու նպատակով:
Շնորհակալել գիտական
համագործակցության
ըրջանակները:

ներկայացում
ASRP-2026, OPTCS -
2026, BRIA 2026,
դպրոց-
գիտաժողովների
նյութերի
հրատարակման
նպատակով,
գրախոսական և
հրատարակչական
աշխատանքներ:
Հանրամատչելի
հաղորդումների և
գեկուցումների
պատրաստում

01.10.2026-
31.12.2026

Կազմակերպության
տնօրեն՝


(ստորագրություն)

(Վահան Քոչարյան)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Վահան Քոչարյան)
(անուն ազգանուն)

